

ՀԱՐԱՎԿՈՎԿԿԱՍՅԱՆ 14-ՐԴ ՄԵԴԻԱ ՀԱՄԱԺՈՂՈՎ

**«Կեղծ լրատվություն», ապատեղեկատվություն և մամուլի ազատություն**

2017 թ., մայիսի 10-11, Թբիլիսի, Վրաստան

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

*Մույն փաստաթղթում ամփոփված են Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում 2017 թվականի մայիսի 10-11-ին ՁԼՄ-ների ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցչի գրասենյակի կողմից կազմակերպված՝ ամենամյա 14-րդ հարավկովկասյան մեդիա համաժողովում Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի ավելի քան 80 լրագրողների, կառավարության և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, ինչպես նաև Լիտվայից և Ռուսաստանի Դաշնությունից միջազգային փորձագետների և մասնակիցների գնահատականներն ու առաջարկությունները:*

*Համաժողովը նվիրված էր տարածաշրջանում ազատ լրատվամիջոցների և խոսքի ազատության մարտահրավերներին, ինչպես նաև մեդիա արհեստավարժությունը բարձրացնելու և մամուլի ազատությունը խթանելու գործում ԵԱՀԿ լավագույն փորձին՝ «կեղծ լրատվության», ապատեղեկատվության և քարոզչության համատեքստում:*

**Մենք՝ համաժողովի մասնակիցներս, համամիտ ենք, որ՝**

1. Տեղեկատվության և գաղափարների աղբյուրների լայն բազմազանության առանց խոչընդոտների հասանելիությունը, դրանք տարածելու հնարավորությունները, բազմազան մեդիա միջավայրը, այդ թվում նաև՝ հանրային դեբատների և գաղափարների ազատ փոխանակման դյուրացումը, կառավարության և իշխանավորների նկատմամբ վերահսկիչ դերակատարությունը չափազանց կարևոր են հասարակության և ազատ մամուլի համար Հարավային Կովկասում:

2. Այսօր լրագրությունը Հարավային Կովկասում բախվում է բազմաթիվ մարտահրավերների՝ կապված պետական և ոչ պետական սուբյեկտների կողմից հրահրված ապատեղեկատվության (որը երբեմն անվանում են «թյուր» կամ «կեղծ լրատվություն») և ավանդական մամուլում ու սոցիալական ցանցերում քարոզչության ավելացման հետ:
3. Ապատեղեկատվությունն ու քարոզչությունը, որպես կանոն, կանխամտածված են և իրականացվում են հասարակությանը մոլորեցնելու և ԵԱՀԿ պարտավորություններով ու միջազգային իրավական այլ երաշխիքներով ամրագրված՝ հասարակության և անհատների՝ իրազեկված լինելու, սահմաններից անկախ ամեն տեսակի տեղեկատվություն և գաղափարներ փնտրելու, ստանալու, ինչպես նաև տարածելու իրավունքին միջամտելու նպատակով:
4. Տեղեկատվությունն ու գաղափարները տարածելու մարդու իրավունքը չի սահմանափակվում միայն այն հայտարարություններով, որոնք իշխանությունների կողմից համարվում են «ճիշտ»: Այդ իրավունքը տարածվում է նաև այնպիսի տեղեկատվության և գաղափարների վրա, որոնք կարող են ցնցել, վիրավորել կամ անհանգստացնել:
5. Վերը նշված դրույթն, այնուամենայնիվ, չի ենթադրում պաշտոնյաների կամ պետական սուբյեկտների կեղծ հայտարարությունների միտումնավոր կամ անփույթ տարածում:
6. Պետությունները կրում են դրական պարտավորություններ մամուլի ազատության համար բարենպաստ միջավայրն ամրապնդելու տեսանկյունից, ինչը ներառում է բազմակարծիք մամուլի խթանում և պաշտպանություն՝ հատկապես ավանդական մամուլի վրա տնտեսական կամ այլ բնույթի ճնշման աճի պայմաններում:

### **Այդ առումով մենք առաջարկում ենք հետևյալը.**

7. Պետություններն իրավունք ունեն սահմանափակել մամուլի ազատությունը միմիայն համաձայն միջազգային իրավունքի

նորմերի, մասնավորապես, երբ դա նախատեսված է օրենքով, ծառայում է միջազգային իրավունքով ճանաչված հասարակական օրինական շահերին, անհրաժեշտ և համարժեք է այդ իրավունքները պաշտպանելու համար: Նման սահմանափակումները կարող են նաև սահմանվել այն պարագայում, երբ դրանք, վերը գրված պահանջներին համահունչ, հետապնդում են խտրականության, թշնամության և բռնության հրահրում ու ատելության քարոզ արգելելու նպատակ:

8. Անորոշ և երկիմաստ գաղափարների վրա հիմնված տեղեկատվության, այդ թվում՝ «կեղծ լրատվություն» կամ «ոչ անաչառ տեղեկատվություն» տարածելու ընդհանուր արգելքը հակասում է մամուլի սահմանափակման վերաբերյալ ԵԱՀԿ պարտավորություններին և միջազգային այլ ստանդարտներին, ուստի չպետք է կիրառվի:
9. Պետության կողմից ամբողջական կայքերի, IP հասցեների կամ ցանցային պրոտոկոլների արգելափակումը դիտարկվում է որպես ծայրահեղ միջոց և արդարացվում է միայն այն դեպքում, եթե դա սահմանված է օրենքով և անհրաժեշտ է միջազգայնորեն ճանաչված մարդու իրավունքները կամ օրինական հասարակական շահերը պաշտպանելու նպատակով: Նման միջոցները պետք է լինեն համաչափ և կիրառվեն միայն այն դեպքերում, երբ ավելի մեղմ այլընտրանքային միջոցները ի գործ չեն պաշտպանելու հասարակական շահերը և պետք է ապահովվեն սահմանված գործընթացով:
10. Պետական սուբյեկտները չպետք է հովանավորեն, խրախուսեն, տարածեն կամ անեն հայտարարություններ, որոնք իրենց տեղեկությամբ կամ ողջամիտ դատողությամբ, ըստ էության, հանդիսանում են ապատեղեկատվություն կամ քարոզչություն: Նրանք պարտավոր են երաշխավորել իրենց կողմից տարածվող տեղեկատվության հուսալիությունն ու հավաստիությունը՝ ազգային և միջազգային օրենսդրության, ինչպես նաև պետական պարտավորությունների համաձայն:

11. Պետությունները պետք է ապահովեն կայուն, անկախ և լիարժեք ապահովված հանրային լրատվամիջոցներ, որոնք գործում են հստակ մանդատի համաձայն՝ ի նպաստ համընդհանուր հանրային շահերի և Հարավային Կովկասում լրագրության բարձր չափանիշների սահմանմանն ու պահպանմանը:
12. Պետությունները պարտավոր են ձեռնարկել այլ միջոցներ՝ բազմակարծիք մամուլի ձևավորմանը նպաստելու նպատակով:
13. Պետությունները պարտավոր են ձեռնարկել միջոցներ՝ ի նպաստ մամուլի և թվային գրագիտության զարգացմանը, մասնավորապես՝ ընդգրկելով այդ թեմաները հանրակրթական դպրոցի ուսումնական ծրագրում և ներգրավելով քաղաքացիական հասարակությանը և այլ շահագրգիռ կողմերի՝ թեմայի վերաբերյալ իրազեկվածության մակարդակը բարձրացնելու նպատակով:
14. Պետությունները պարտավոր են դիտարկել այլ միջոցներ՝ ի նպաստ հավասարության, միջմշակութային փոխըմբռնման և այլ ժողովրդավարական արժեքների և ընդդեմ խտրականության՝ ապատեղեկատվության և քարոզչության բացասական ազդեցությունը սահմանափակելու նպատակով:
15. Մամուլն ու լրագրողները պետք է հավուր պատշաճի աջակցեն ինքնակառավարման արդյունավետ համակարգերին մամուլի առանձին ճյուղերի (օրինակ՝ մամուլի գործողությունների դեմ բողոքարկման մարմին) կամ կոնկրետ լրատվամիջոցների (օմբուդսմեն) մակարդակով, որոնք ներառում են լրատվության ճշգրտության չափանիշներ և թույլ են տալիս մամուլում անել ուղղումներ և/կամ հերքել ոչ ճշգրիտ հայտարարություններ:
16. Լրատվամիջոցները՝ հասարակությունում վերահսկիչի իրենց դերակատարմանն համաձայն՝ պետք է իրենց գործունեության շրջանակներում նախատեսեն ապատեղեկատվության և քարոզչության քննադատական լուսաբանում՝ հատկապես կոնֆլիկտների, ընտրությունների և հանրային այլ շահերի վերաբերյալ դեբատների ժամանակ:

17. ԶԼՄ-ների ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցչի գրասենյակը պետք է աջակցի Հարավային Կովկասում մասնակցային և թափանցիկ նախաձեռնությունների մշակմանը՝ ժողովրդավարության, մամուլի ազատության, լրագրության և քաղաքացիական տիրույթում ապատեղեկատվության և քարոզչության ազդեցությունն ավելի լավ ընկալելու, ինչպես նաև այդ երևույթներին համարժեք արձագանքելու նպատակով: